

– Այս միջոցիս Վահրիճ ներս մտաւ.

– Տեր, դուրսը նժոյգ մը կայ, որուն նմանը ես կայսեր ախոռներուն մէջ չեմ տեսեր, Յուլակին լաւ ընկեր մը կը լինի:

– Այդ նժոյգը, Տիկինը ընծայ կընէ Արիգային,– պատասխանեց Գուրգէն անխռով:

– Իմ նժոյգս որ գի՛ն չունի: Անհաւա՛տ, անօրէ՛ն աւազակներ, մինչեւ, ե՛րբ համբերելու է ձեզի...– գոչելով կինը արագութեամբ յափշտակեց դաշոյնը բարձին տակէն եւ Գուրգէնի վրայ շողացուց, որ միշտ արթուն բռնեց ձեռքը եւ մատներուն մէջ քիչ մը տրորելով պարտաւորեց թողլու դաշոյնը, բայց միանգամայն զարմացաւ նաեւ այդ կը նկան կորովին վրայ, որ աղաղակներ չի ձգեց ուրիշ մարդկանց պէս՝ այլ միւս ձեռքով իւր երեսը ծածկել կը ջանար քօղով:

– Ո՛ւմ համար կը ծածկես այդ գեղեցիկ լաչակիդ պէս կանաչ երեսդ,– ըսաւ Գուրգէն, եւ զննելով դաշոյնը՝ արհամարհոտ աչօք «այդ խաղալիքը օրուան մէջ քանի անգամ կը գործածես» հարցուց հեզնութեամբ: Եւ երկու կտոր ընելով գետինը նետեց:

Նոյն միջոցին եկան թիկնապահները եւ իմացուցին թէ ամէն բան պատրաստուած էր:

– Տարեք աղջիկները հեծուցեք, Արիգային համար նժոյգը, որ ոչինչ նշանակութիւն չունի, փոխանակ իւր այնչափ չարչարանաց եւ բանտերու տայս գարշելի կնոջ ձեռքէն.– ըսաւ եւ ելաւ:

Կարաւանը ուրախ-գուարթ ուղեւորեցաւ ի Տարօն գաւառ, եւ երբ Սասուն հասաւ, սիրալիր ընդունելութիւն գտաւ ամենէն: Բայց կարելի չէր ուրախութիւն ցցնել Յովնանու սուգին առջեւ, որ բոլոր լեռը համակեր էր: Սասուն իւր դիւցազնը կ'ողբար եւ ամէն տուն հայր մը եւ եղբայր մը կորուսեր էր: